



35. ԿՈՒՇՈՒՐ ՀԱՌԻՑՆԸ

Մին շատ տղատար, հըռթնատար ու թոռնատար տան տոռնը
մին հերթէպյուն մին հլիվուր մարթ պինում ա, տընըցուց լոխմի-
նին հըրցնում, թա ծըեր տոնը մուկբյը նան ապրանքն ա՝ շատ սի-
րում, թա՝ սերը կօխ սուս ըն անում, կարում լըն հլիվուրըն ջո-
ղորը տան, մենակ կումուր հառթնը ասում ա.— Հըրուտոթունը,
մուկբյը, փողը լոխ ծըեռքու եղտ ա, կլամ ա, քյինամ, տանը սեր
պիտի, լոխ հենց պիտի ինին մին հըլավում քոն իլած:

Տրանա ետն էլ հլիվուրն ասում ա.— Թրան ետը լոխ էս կումուր
հառթնեն խուսկավը կըքյինաթ, հինչ վըեր ասե, անջուկ կօնեքյ:
Ասում ա, պըրծընում, տուս կլամ, էլ ուրվամ շի:

Էտ մըեծ տանը շատ վըեղ, շատ հանդ, շատ արտ ա ինժէմ:
Արտը վըեր միւըրի մըծանում ա, հալա հինձիլի տըռնալու, էտ
կումուր հառթնը ասում ա.— Դըրյազավ հըրեցեքյ, պերեքյ թալա
տուվեքյ: Խտի յէլ անում ըն:

Կումուր հառթնը էտքան ըրտերին տըեղը լոխ կարկած ա վա-
րել տամ, էտ կարկածը վըեր միւըրի տիղնավում ա տըեռնում,
տըհանցա տասսը կըտրել ա տամ, պիրում կոտրում, տըեսնում
լոխմինին մաշը լիգյը ցորընը ատ ցորընը լուվանում ըն, շուրջ-
նում, տանում ճեղաց, աղում, պիրում հաց թընում: Հացըն համը

կազնու համ ա ինում Տրանավ գյուղում ըն, վըեր կըրկըժնընեն հալա հըսալ չի Տրանա ետը կումուր հառթնը տընըցուց լոխնինին ասում ա.—Հու հիշտըզավ քյինամ ա, տոն կյանիս մին պեն պիրի:

Հանդա տոն կյանիս ամմըն օր լոխ ամերյա մին պեն ըն պիրունմ, մինակ կումուր հառթնեն նշանածը տերտակ ա կյամ, Կումուր հառթնը լոխնինին քըշտին մարթին իրեսնըյեր խոսում ա, ետնան էլ ասում.—Վըեր էքուժ տերտակ եկեր, թուղըլական լըմ տանը մղակավը նի մննես:

Էքյաը տոն կյանիս կումուր հառթնեն մարթը վըել մին պեն լի քթեննում, հզըցումը մին ըսպանած օց ա տընենում, քյինամ ա մհակին քթավը քյունմ, պիրունմ հայաթը, ախապրցն ան հըրթներեն պերած տես-տենին խառնում, Կումուր հառթնը լոխնընան թաքուն քյինամ ա էտ օցըն պիրանան մին բրիլյանտա շինած մուտանա տուն օնում, պիրունմ հւրան օթաղը:

Տրանա ետը կըրկըժնեն վըեր կյամ ա հըսնում, կումուր հառթնը լոխ քաղել ա տամ, տահանց մաշան էնքան ցորըն ըն տու տամ, վըեր տասը տարե հերիքյ կանե:

Էտ տարըն շատ թհննդ ծմբեռն ա ինուն, հիյվըննեն լոխ սոված, կյումերումը պըռանչում ին: Հիյվընտարերը կյամ ըն էտ կումուր հառթնեն անա խոտ օզում, տա յել ասում ա.—Ես խոտը փողավ լըմ ծախում, ցոռնավ ըմ ծախում: Խոտըն թըյեննեն լոխ ցորըն ա շինուն, տահանց ըսկսում ըն թաքավըերու մնան ապրեկը: Էտ զրթերքումն էլ տահանց տանը մնան սիրավ տոն լի կար:

Մին քշեր էտ հառթնեն պատրունը կյամ ա տրա տոռնը պենում, տընենում էտ քշերվա խըվարումը հենց ա մին իրիյնակ ինի երգիինքան վըեր եկած, լուսան էլ մարթու աշկ ա օզում, թա ծակեի:

Պատրունը ետ կյամ ա կնդանը կոշտը, տընսածը քշտին նազլ անում: Կընեգյը խըկլունք ա ինուն, ասում ա.—Ա՛ հիյվուր, հինչ պե՞ն օնըես, հինչըտ ա՞ մնացալ, վըեր օզում ըս գյիղաս, թա մըեր հառթնեն տանը էն հի՞նչ լին ա, մունք էս ընք թաքավըերու մնան ըպրելիս, էլ հինչիտ ա՞, վըեր օզում ըս ամմըն հինչ գյիղաս: Մարթն ասում ա.—Զէ, վըեր շէ, ես պիտի գյիղամ, թա էն հի՞նչ լուն ա:

Պատրունը քյինամ ա կումուր հառթնեն կոշտը, ասում.—Նազլ ըրա, տընենամ էն հինչան ա՞, վըեր քշեր-ցիրեկ քու օթաղըտ իրիյնակու լուն ինդյած ա ինուն: Հառթնը ասում ա.—Ապա, ես տա քեզ կարել լըմ ասըեմ, վըեր օզում ըս գյիղաս, քու տղըետ

Նհրեստ պիտի ըստընդաս տուս կյամ, քլինամ օրիշ շնուռմ ապրը-
եմ, մըեր իլլթ-շիլածն էլ լոխ քեզ ինի! Տու մի ասքել, իրիյնա-
կու մնան լուս տվողն օցըն պիրանան տուս կալած մուտանան ա:

Տա մուտանան յոր ա օնում քցնում մաննը, մարթին նհրետ
քլինամ կոխկե շներ, մին էրկու-իրնք տըռնան ետն էլլա ամմընն
հինչատար տընուռմ, իսկ պըտրումնեն քշտին մնացած ամմընն
հինչն օրկանց-օր ժոմուն մնան հալում ա պըրծնում, էլլա քյի-
սըրոթունը կյամ ա նահանց տուանը շոքում, Հացը հունց պեն ա,
վըեր մարթին տանում ա գուշմանին տոռնը:

Մին օր հլիվուրը ճըղորտված շուրերավ կյամ ա կումուր հառթ-
նեն տոռնը թակում, հառթնը պըտրումնեն տանում ա տոն, լավ
դոմըխլեզ անում: Պատրունըն ասում ա.—Դե՛ լավ, հինչ իլալ ա,
իլալ ա, մուկքյ ու ապրանք ա իլալ, տահանք լոխ եղու մնան հալալ
ա՝ քյեցալ, էլլա եք մըեր կոշտը, բիրադի ըխշադինքյ, հինչ վըեր
կասրես, քու ասածըտ կանենքյ, էլ օրաս ետը քու սիր ու սեկրետետ
նհրետ պեն շօնըեմ: Հառթնը ասում ա.—Ապա, տընսնում ը՞ս էտ
հացընն կըտուրտանքը, հոմնց ըրա, վըեր նահանք ուրուր անա
կենան, նորըմինան սաղ հաց աղեռնան: Պատրունն ասում ա.—
Ա՛ հառթնը, յանի հացընն կըտուրտանքը հոմնց կըկա՞րեն ուրուր
անա փըռնեն, սաղ հաց տընենան: Հառթնը ասում ա.—Ապա, իտի
յէլ մումք կարել լընք ուրուր սիրինքյ, ուրուր խոսկ ըսկանանք,
լավն էն ա՝ ճոկ-ճոկ, ուրուր անա հեռու ապրընքյ, իտի
ուրուր ավելի շատ կըսիրինքյ, իսկ քու ապրուստըտ, հա-
ցըտ, ճուրըտ, շորըտ ամմընն հինչ քու տղորանցըտ լոխնինին
պարտկն ա, կողի ուրուր անա ճոկվալ ընք, պիտի մինչև վերև քեզ
լոխ քյամմագյ անընքնքյ:

